

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 4-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու հունիսի 6—10 օրերին տեղի ունենալիք համակրոնական միջազգային համագումարին, որը նվիրված էր տևական խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Վեհափառ Հայրապետը Մայր տաճար իջավ եկեղեցական թափորով և, հաջող ուղևորության համար աղոթք կատարելուց հետո, մեկնեց Երևանի օդանավակայան Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ՝ տ. Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեց և բարի երթ մաղթեց նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետին դեպի Մոսկվա ուղեկցեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Մոսկվայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին վերոհիշյալ ժողովին մասնակցելու համար Մոսկվա ժամանած տ. Շահե արքեպ. Անեմյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ ու Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ինչպես նաև Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Մոսկվայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում, հանուն Նորին Սրբություն Ռուսաց Տ. Պիմեն Պատրիարքի, տ. Անտոնին միտրոպոլիտը՝ իր ուղեկիցներով:

Վեհափառ Հայրապետը և Իր շքախմբի անդամները առաջնորդվում են «Ուկրաինա» հյուրանոց:

Հունիսի 5-ին, կիրակի. Հիշատակ Եղիա մարգարեի: Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում պատարագում է տ. Արսեն եպս. Բերբերյանը: Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը, Որը և քարոզում է «Հայր մեր»-ից առաջ՝ ողջունելով և օրհնելով եկեղեցում ներկա եղող հայ հավատացյալներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է Իր՝ Մոսկվա ժամանման շարժառիթի մասին, որ է՝ մասնակցությունը համակրոնական միջազգային համագումարին՝ նվիրված տևական խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Վեհափառ Հայրապետն Իր խոսքի մեջ ջերմորեն ողջունում է այդ կոնֆերանսի հրավիրումը, որպես աշխարհում մնայուն խաղաղության հաստատման համար կարևոր մի նախաձեռնություն:

Հունիսի 6-ին Մոսկվայում բացվում է խաղաղության այդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում է նաև հայ եկեղեցու պատվիրակությունը՝ Հայոց Հայրապետի գլխավորությամբ (տես այս մասին «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 24—31)։

Ժողովում Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս խաղաղության նվիրված բովանդակալից մեծ ճառով։

Հունիսի 11-ին, շաբաթ օրը, կեսօրից հետո, Մայր Աթոռ է ժամանում Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի և տ. Ուսկան ծ. վրդ. Գալբակյանի։

Վեհափառ Հոր բարեհաճ կարգադրությամբ տ. Արսեն եպս. Բերբերյանը և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը հովվական այցելություն են տալիս Ռոստովի և Զալդրի (Հյուսիսային Կովկաս) հայոց եկեղեցիներին։ Մայր Աթոռի ներկայացուցիչներին տիրալիր ընդունելություն են ցույց տալիս Ռոստովի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Հակոբ Բլուզյանը, Ռոստովի հայոց հոգևոր հովիվ տ. Գրիգոր ավագ քհն. Տերտերյանը, Զալդրի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Մ. Սամվելյանը և հոգևոր հովիվ տ. Վահան քհն. Դարբինյանը։

Կիրակի օրը Ռոստովի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և ներկայացնում թեմի առաջնորդական նոր փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին հավատացյալներին, հաղորդելով նաև Հայոց Հայրապետի ողջույնը և օրհնությունը։

Հունիսի 13-ին Մայր Աթոռ են ժամանում տ. Արսեն եպս. Բերբերյանը և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը։